ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարանը հայտարարում է մրցույթ քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ-աուդիտորի (ծածկագիր՝ 3.1-19) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

27.02.2013

Հայտատու՝ Դիլիջանի քաղաքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013թվականի ապրիլի 5-ին ժամը 11.00-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ-աուդիտորի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 3.1-19) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
Առաջատար մասնագետ-աուդիտորը պետք է, ընդգրկված լինի ներքին աուդիտորների՝ որակավորված անհատների և կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում, ունենա առնվազն միջնակարգ-մասնագիտական կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Բաժնի առաջատար մասնագետ-աուդիտորը կատարում է բաժնի պետի հանձնարարությունները, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ: Հետևում է ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորի վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգի և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը, պատրաստում և բաժնի պետին է ներկայացնում ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, պատրաստում և բաժնի պետի հաստատմանն է ներկայացնում ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը, դրանց փոփոխությունները, յուրաքանչյուր

աուդիտի համար մշակում և բաժնի պետի հաստատմանն է ներկայացնում աուդիտորական առաջադրանք, բաժնի պետին զեկուցում է աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ: Մասնակցում է ներքին աուդիտի տարեկան և օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների կազմման աշխատանքներին, մասնակցում է ներքին աուդիտի տարեկան ծրագրերի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը, համագործակցում է ներքին աուդիտի կոմիտեի և դրա անդամների հետ, մասնակցում նրանց խորհրդակցություններին: Առաջատար մասնագետ-աուդիտորը ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
Դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1. Դիմում՝ մրցույթային հանձնաժողովի անունով:
2. Անձնագրի, աշխատանքային գրքույկի, կրթությունը հավաստող փաստաթղթերի (արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի) պատճենները:
3. Մեկ լուսանկար 3x4 չափսի:
Մրցույթին մասնակցելու համար դիմորդները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ:
Մրցույթը կկայանա 2013թվականի ապրիլի 5-ին ժամը 11-ին Դիլիջանի քաղաքապետարանում:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 10.00-17.00, բացի շաբաթ և կիրակի օրերից, Դիլիջանի քաղաքապետարանում (ք. Դիլիջան, Մյասնիկյան փող. 55, հեռ. 0-268-2-76-87), ՀՀ Տավուշի մարզպետարանում (ք. Իջևան, Սահմանադրության 1, հեռ. 0-263-3-22-14):
Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2013 թվականի մարտի 20-ը, ժամը 18-ը:

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55

Հեռ..՝ +374 268 23375

Էլ. փոստ՝ dilijanhamaynq@rambler.ru

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ